ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Սիմոնյան,**

Հիմք ընդունելով, որ դադարել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ Կարեն Անդրեասյանի լիազորությունները և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 144-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 24.03.2025թ.-ի որոշմամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում թեկնածու է առաջադրվել Անահիտ Աբրահամյանը: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը:

Կից ներկայացվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում թեկնածու առաջադրելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի համար օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը:

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**01.04.2025թ.**

0095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 144-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

1. Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում թեկնածու առաջադրել Անահիտ Աբրահամյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը:

3. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը, ինչպես նաև օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**24.03.2025թ.**

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Անահիտ Աբրահամյանս, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 96-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ տալիս եմ իմ համաձայնությունը Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Անահիտ Աբրահամյան

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ԱՆԱՀԻՏ ՎԼԱԴԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**Ծնվել է 1979 թվականի փետրվարի 27-ին, Երևանում, մտավորականների ընտանիքում:**

**Կրթություն**

1996-2001թթ. գերազանցությամբ ավարտել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետը՝ իրավաբանի որակավորմամբ:

2002-2007թթ. սովորել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:

2019-2021թթ. հավատարմագրվել է Հարվարդի Քեննեդիի կառավարման դպրոցի կողմից՝ որպես հանրային քաղաքականության և առաջնորդության մասնագետ:

2022-2024թթ. ավարտել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանը՝ մարդու իրավունքների և սոցիալական արդարության արվեստների մագիստրոսի որակավորմամբ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի Միջազգային առաջնորդ այցելուների՝ «Կառավարությունում թափանցիկություն և հաշվետվողականություն» ծրագրի շրջանավարտ է:

Շվեդիայի զարգացման ծրագրի կողմից ֆինանսավորվող «Մեդիան թվային դարաշրջանում» միջազգային վերապատրաստման ծրագրի շրջանավարտ է:

**Աշխատանքային գործունեություն**

2024 թվականի մայիսի 14-ից մինչ օրս ՀՀ Արդարադատության նախարարության «Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենն է:

2022 - 2024 թթ. հանդիսացել է ՀՀ Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության պետը:

2022 թվականի օգոստոս – հոկտեմբեր ամիսներին աշխատել է ՀՀ Արդարադատության նախարարությունում՝ որպես կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

2022 թվականի ապրիլ - օգոստոս ամիսներին աշխատել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում որպես Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության պետ:

2022 թվականի փետրվարից մինչև մայիս ամիսը՝ որպես Եվրոպայի խորհրդի և Արդարադատության ակադեմիայի դասընթացավար դատավորներին, դատախազներին և քննիչներին դասավանդել է «Կանանց համար արդարադատության մատչելիությունը» առարկան:

2021 - 2022 թթ. աշխատել է «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ որպես գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ, միջազգային ծրագրերի համակարգող:

2021 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամիսներին հանդիսացել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կարճաժամկետ փորձագետ:

2020 - 2022 թթ. հանդիսացել է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի վավերացման ուղին Հայաստանում» ծրագրի ազգային փորձագետ:

2019 - 2020 թթ. պայմանագրային հիմունքներով աշխատել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում:

2019 թվականի հոկտեմբերին հանդիսացել է «Թրանսփարենսի Ինթերնեշընըլ Հայաստան» հակակոռուպցիոն կենտրոնի կարճաժամկետ փորձագետ:

2016 – 2019 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավաբանական վարչության իրավական պաշտպանության բաժնում՝ որպես Հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ/իրավաբան:

2012 - 2016 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավաբանական վարչության իրավական փորձաքննությունների բաժնում՝ որպես Հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ/իրավաբան:

2011 - 2012 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության շտաբի կազմակերպական-վերլուծական վարչության բարեփոխումների և զարգացման ծրագրերի համակարգման բաժնում:

2008 - 2011 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավաբանական վարչության իրավական պաշտպանության բաժնում:

2003 - 2008 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավական ապահովման վարչության վարչաիրավական բաժանմունքում:

2001 – 2003 թթ. օգոստոսի 23-ից աշխատել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավական ապահովման վարչության կազմակերպական-վերլուծական և ՆԳՆ ուսումնական հաստատությունների հետ կապի բաժնում:

**Գիտական ուսումնասիրությունների ոլորտը՝** դատական իշխանություն և դատարանակազմություն, քրեական դատավարությունում մարդու իրավունքների ապահովման երաշխիքները:

**Մասնակցությունը գիտական/մասնագիտական կառույցներին**

**Հանդիսանում է Լոնդոնի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի թղթակից անդամ:**

**Ազգային դատական դասընթացավարների միջազգային ցանցի անդամ է:**

*Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի կողմից հավաստագրված դասընթացավար է մարդու իրավունքների, էթիկայի, բարեվարքության, կոռուպցիայի դեմ պայքարի, գենդերային հավասարության, խտրականության և ատելության խոսքի դեմ պայքարի ոլորտներում:*

2009 թվականի սեպտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից շնորհվել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստանալու իրավունքի վերապահման վկայագիր:

2012-2014թթ. ակտիվորեն մասնակցել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) Հայաստանի պատվիրակության կողմից իրականացվող զեկույցների կազմման և համակարգման աշխատանքներին:

2013 թվականին հանդիսացել է, Միավորված Ազգերի Կազմակերպության Միգրացիայի միջազգային կազմակերպության «Միջազգային միգրացիոն օրենք N30 - Միգրացիայի մասին բառարան (Հայաստան)»-ի թարգմանության փորձագետ և համախեղինակ:

2016 թվականի հունիսին հանդիսացել է Գերմանիայի Վիսբադեն քաղաքում կայացած Արևելյան գործընկերության ոստիկանության համագործակցության ծրագրի 2-րդ բաղադրիչի՝ «Էթիկա և կոռուպցիայի դեմ պայքար», Հայաստանի ոստիկանության փորձագիտական խմբի ներկայացուցիչ և զեկուցող:

2016-2018թթ. հանդիսացել է Միավորված Ազգերի Կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային կոնվենցիայի՝ Հայաստանի երրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ ամփոփիչ դիտարկումների աշխատանքային խմբի անդամ:

2017-2018թթ. հանդիսացել է Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի «Հայաստանի զարգացման ռազմավարություն, 2030» նախագծի նախապատրաստման մարդու իրավունքների աշխատանքային խմբի փորձագետ:

2021 թվականի հուլիսից մինչև 2022 թվականի ապրիլի 11-ը հանդիսացել է Եվրոպայի խորհրդի իրավաբան մասնագետների համար նախատեսված HELP հեռավար հարթակի ազգային համակարգողը:

2021 թվականի հուլիսից մինչև 2022 թվականի ապրիլի 11-ը հանդիսացել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), Հայաստանի Հանրապետության Արդարադատության ակադեմիայի,

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի միջև կնքված փոխըմբռնման հուշագրով իրականացվող «Ատելության շարժառիթով կատարված հանցագործություններ. վերապատրաստում դատախազների համար» ծրագրի Հայաստանի ազգային համակագողը:

2022 թվականի ապրիլից մինչև օգոստոս ամիսը հանդիսացել է Միավորված Ազգերի Կազմակերպության «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» վերանայման մեխանիզմի 2-րդ շրջանի փորձագետ:

2022 թվականի մայիսից մինչև սեպտեմբեր ամիսը հանդիսացել է Հայաստանում խտրականության, ատելության խոսքի և ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետ:

***2022-2024թթ. հանդիսացել է Եվրոպայի խորհրդի Իրավական համագործակցության (CDCJ) եվրոպական կոմիտեում Հայաստանի ներկայացուցիչը, 2022-2023թթ. ԶԼՄ-ների և տեղեկատվական հասարակության ղեկավար կոմիտե (CDMSI) անդամ:***

2022 – 2024թթ. Եվրոպայի «TOPCOP» ծրագրի Հայաստանի ազգային համակարգողը:

***Հանդիսանում է մի շարք գիտական հոդվածների հեղինակ, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական Միության երկու ուսումնական ձեռնարկների համահեղինակ և մեկ գրքի խմբագիր:***

**Մասնագիտական վերապատրաստումներ**

Վերապատրաստվել է Իտալիայի և Ֆրանսիայի դատական դպրոցներում, Գերմանիայում, Ժնևի մարդասիրական իրավունքի միջազգային ինստիտուտի Սանռեմոյի մասնաճյուղում և այլն: Մասնակցել է բազմաթիվ ազգային, օտարերկրյա և միջազգային վերապատրաստումների, բարձրաստիճան համաժողովների, գիտական աշխատաժողովների, սեմինարների և այլն:

**Այլ տեղեկություններ**

ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Պենսակոլա քաղաքի պատվավոր քաղաքացի է: Տիրապետում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին:

Ամուսնացած է: Ունի երկու երեխա:

Էլ-փոստ: anahit.abrahamyan2023@gmail.com

27.03.2025թ.

**Անահիտ Աբրահամյան**

**ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

1. «Անմեղության կանխավարկածի սկզբունքը». Օրենք և իրականություն, 2003թ.

2. «Անմեղության կանխավարկածի սկզբունքը և կալանքը Հայաստանի Հանրապետությունում». Դատական իշխանություն, 2005թ.

3. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ ձեռնարկ՝ ոստիկանության ծառայողների համար». Եվրոպայի խորհուրդ, 2021թ.

4. «Քովիդ-19-ի ազդեցությունը մարդու իրավունքների վրա. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան». Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամ, 2021թ.

5. «Դատական համակարգում ուսուցման մեթոդաբանություն», Եվրոպական միություն, 2022թ.

6. "The Principle of the Presumption of Innocence from the Aspect of Reliable and Probable Knowledge", Banber, Academy of Justice, 2024.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԳՆ ԱԿԱԴԵՄԻԱ
(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)

# ԴԻՊԼՈՄ

ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ

AD № 003426

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ

հուլիսի «03»-ի ՈՐՈՇՄԱՄԲ

Անահիտ Վլադիկի Աբրահամյանին
(անուն, հայրանուն, ազգանուն)

ՇՆՈՐՀՎԱԾ Է

իրավաբանի

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

իրավագիտություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

«06» հուլիսի 2001 թ. ք. Երևան Գրանցման № 216

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

© «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն: 2001

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**

АКАДЕМИЯ МВД
(наименование высшего учебного заведения)

# ДИПЛОМ

С ОТЛИЧИЕМ

AD № 003426

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ

от "03" июля 2001 года

Абрамян Анаит Владиковне
(фамилия, имя, отчество)

ПРИСУЖДЕНА КВАЛИФИКАЦИЯ

юриста

ПО СПЕЦИАЛЬНОСТИ правоведение

*Председатель государственной экзаменационной комиссии*

*Ректор*

"06" июля 2001 г. г. Ереван Регистрационный № 216

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

**REPUBLIC OF ARMENIA**

Academy of Ministry of Interior
(higher educational establishment)

# DIPLOMA

WITH HONOUR

AD № 003426

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF

"03" July 2001

Anahit Abrahamyan
(first name, last name)

IS QUALIFIED AS

Lawyer

IN THE FIELD OF Science of Law

*Chairman of the State Examination Commission*

*Rector*

"06" July 2001 c. Yerevan Registration № 216

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

Ազգանուն, անուն, հայրանուն

Աբրահամյան Անահիտ Վլադիկի

Ծննդյան տարեթիվը «27» փետրվարի 1979 թ.

Կրթության վերաբերյալ նախորդ փաստաթուղթը՝ Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության ատեստատ

սերիա Ա № 031058 տրված է՝ «25» հունիսի 1996 թ.

Ընդունելության ձև հանձնել է քննություններ

Ընդունվել է 1996 թվականին Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոց

Ուսուցումն ավարտել է 2001 թվականին Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության ակադեմիայում

Ցերեկային ուսուցման նորմատիվային տևողությունը՝ 5 տարի

Մասնագիտությունը իրավագիտություն

Մասնագիտացումը քննչական

Կուրսային նախագծեր (աշխատանքներ)՝

1.Քրեական իրավունք – գերազանց
2.Քրեական դատավարություն - լավ
3.Կրիմինալիստիկա - գերազանց
4.Կրիմինալիստիկա /պրակտիկում/ - գերազանց
5.Պետության և իրավունքի տեսություն - գերազանց

Պրակտիկաներ՝ Ուսումնական /4 շաբաթ/ - լավ
Արտադրական (ստաժավորում) /14 շաբաթ/ - գերազանց
Վարժախաղեր /1 շաբաթ/ - գերազանց

Ավարտական պետական քննություններ՝

1.Քրեական իրավունք - գերազանց
2.Կրիմինալիստիկա - գերազանց

Ավարտական աշխատանքի (դիպլոմային նախագծի, մագիստրոսական թեզի) կատարում և պաշտպանում Քրեական դատավարություն առարկայից «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը քրեական դատավարությունում» - գերազանց

Սույն դիպլոմը տալիս է կրթության մակարդակին և որակավորմանը համապատասխան գործունեության իրավունք:

Փաստաթուղթը մեկ թերթից է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ԴԻՊԼՈՄԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Առանց դիպլոմի անվավեր է

AD № 003426

(դիպլոմի սերիա, համար)

№ 216

(գրանցման համարը)

տրվել է

«06» հուլիսի 2001 թ.

**Պետական քննական հանձնաժողովի**

«03» հուլիսի 2001 թ.

որոշմամբ շնորհվել է

իրավաբանի որակավորում «Իրավագիտություն» մասնագիտությամբ

Պետ

Ֆակուլտետի պետ

Տեսուչ

Կ. Տ.

Ուսումնառության ընթացքում հանձնել է ստուգարքներ և քննություններ հետևյալ առարկաներից՝

| Թիվ | Առարկաների անվանումը | Ժամերի ընդհանուր քանակը /լսարան. ժամաքան./ | Գնահա-տականները |
|---|---|---|---|
| 1 | Մասնագիտության ներածություն և գաղտնիության ռեժիմ | 18 | ստուգված |
| 2 | Ընդհանուր և զինվորական կանոնադրություն | 36 | ստուգված |
| 3 | Հայ ժողովրդի պատմություն | 72 | լավ |
| 4 | Առաջին բուժօգնություն | 76 | ստուգված |
| 5 | ՀՀ իրավապահ մարմիններ | 18 | ստուգված |
| 6 | Տրամաբանություն | 76 | ստուգված |
| 7 | Պետության և իրավունքի պատմություն | 160 | գերազանց |
| 8 | Պետության և իրավունքի տեսություն | 132 | գերազանց |
| 9 | ՆԳ ստորաբաժանումների ինֆորմացիոն - տեխնիկական սպասարկում | 134 | լավ |
| 10 | Հայոց լեզու | 112 | լավ |
| 11 | Օտար լեզու | 112 | գերազանց |
| 12 | Ռուսաց լեզու | 112 | գերազանց |
| 13 | Ֆիզիկական պատրաստականություն | 500 | ստուգված |
| 14 | Հռոմեական իրավունք | 36 | ստուգված |
| 15 | Ուղղիչ աշխատանքային իրավունք | 60 | ստուգված |
| 16 | Հատուկ տակտիկական պատրաստականություն | 208 | գերազանց |
| 17 | Սահմանադրական իրավունք | 132 | բավարար |
| 18 | Փիլիսոփայություն | 114 | գերազանց |
| 19 | Տնտեսագիտություն | 114 | գերազանց |
| 20 | Կրակային պատրաստականություն | 190 | ստուգված |
| 21 | Քաղաքագիտություն | 60 | լավ |
| 22 | Մաքսային իրավունք | 36 | ստուգված |
| 23 | Վարչական իրավունք | 114 | գերազանց |
| 24 | Ավտոգործ | 172 | գերազանց |
| 25 | Քաղաքացիական և ընտանեկան իրավունք | 152 | գերազանց |
| 26 | Քրեական իրավունք | 232 | գերազանց |
| 27 | Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն | 60 | ստուգված |
| 28 | Ֆինանսական իրավունք | 36 | ստուգված |
| 29 | Մունիցիպալ իրավունք | 40 | ստուգված |
| 30 | Աշխատանքային իրավունք | 36 | ստուգված |
| 31 | Միջազգային իրավունք | 40 | ստուգված |
| 32 | ՆԳՄ աշխատակիցների մասնագիտական պատր. մանկ. և հոգեբ. | 112 | գերազանց |
| 33 | Քրեական դատավարություն | 234 | գերազանց |
| 34 | Բնապահպանական և ագրարային իրավունք | 36 | ստուգված |
| 35 | Քաղաքացիական դատավարություն | 40 | ստուգված |
| 36 | ՆԳՄ վարչական գործունեություն | 152 | ստուգված |
| 37 | Կրիմինալիստիկա | 228 | գերազանց |
| 38 | Օպերատիվ – հետախուզական գործունեություն | 174 | գերազանց |
| 39 | Քրեաբանություն և հանցագործությունների պրոֆիլակտիկա | 114 | գերազանց |
| 40 | Սոցիալական և էթնիկական հոգեբանություն | 40 | ստուգված |
| 41 | Դատական բժշկություն և հոգեբուժություն | 72 | ստուգված |
| 42 | Հատուկ կուրս / Փաստ. տեսություն/ | 36 | ստուգված |
| 43 | Հատուկ տեխնիկա | 76 | ստուգված |
| 44 | ՆԳՄ աշխատակիցների էթիկա և էսթետիկա | 72 | ստուգված |
| 45 | Սահմանադրական վերահսկողություն | 36 | ստուգված |
| 46 | Մարդու իրավունքները | 36 | ստուգված |
| 47 | ՆԳ ստորաբաժանումների կառավարում | 72 | գերազանց |
| 48 | Դատական հաշվապահություն | 80 | լավ |
| 49 | Նախաքննությունը ՆԳՄ – ում | 72 | ստուգված |
| 50 | Դատախազական հսկողություն | 20 | ստուգված |
| 51 | Հատուկ կուրս /Կրիմինալիստիկա/ | 40 | ստուգված |
| 52 | Միջազգային մասնավոր իրավունք | 48 | ստուգված |
| 53 | Մարդու իրավունքները և ոստիկանությունը | 42 | ստուգված |
| 54 | Դատական փորձաքննություններ | 70 | գերազանց |
| 55 | Ապացույցների տեսությունը քրեական դատավարությունում | 44 | գերազանց |
| 56 | Հատուկ կուրս /Պետության և իրավունքի տեսություն/ | 40 | ստուգված |
| 57 | Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքար | 48 | ստուգված |
| 58 | Միջազգային քաղաքական և տնտեսական կազմակերպություններ | 36 | ստուգված |
|  | ***Ընդամենը*** | 5460 | - |

ՀՀ ՆԳՆ բարձրագույն դպրոցը 2000թ.-ին վերանվանվել է ՀՀ ՆԳՆ ակադեմիա, 2003-ին՝ ՀՀ ոստիկանության ակադեմիա, իսկ 2011թ.-ին՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

# ԱՏԵՍՏԱՏ
## ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Սույն ատեստատը տրվում է Անահիտ
Վլադիմիրի Աբրահամյանին
ծնված 1979թ. ՀՀ
գ. Երևան

առ այն, որ նա 1996թ. ավարտել է
Երևանի թիվ 190
միջնակարգ
դպրոցը և ցուցաբերել է հետևյալ առաջադիմությունը.

| | |
|---|---|
| Հայոց լեզու | 5 (գեր.) |
| Հայ գրականություն | 5 (գեր.) |
| Ռուսաց լեզու | 5 (գեր.) |
| Ռուս գրականություն | |
| Օտար լեզու / անգլ. / | 5 (գեր.) |
| Հանրահաշիվ և անալիզի հիմունքներ | 4 (լավ) |
| Երկրաչափություն | 5 (գեր.) |
| Ինֆորմատիկա | 5 (գեր.) |
| Պատմություն | 5 (գեր.) |
| Հայոց պատմություն | 5 (գեր.) |
| Աշխարհագրություն | 5 (գեր.) |
| Հայաստանի աշխարհագրություն | 5 (գեր.) |
| Կենսաբանություն | 5 (գեր.) |
| Ֆիզիկա | 5 (գեր.) |
| Աստղագիտություն | 5 (գեր.) |
| Քիմիա | 5 (գեր.) |
| Աշխատանք | 5 (գեր.) |
| Ռազմագիտություն | 5 (գեր.) |
| Ֆիզկուլտուրա | 5 (գեր.) |
| Գծագրություն | 5 (գեր.) |

Ավարտական քննություններ.
1. Հայոց լեզու 19 (տասնինը)
2. Հայոց պատմություն 20 (քսան)
3. Մաթեմատիկա 18 (տասնութ)

Դպրոցի տնօրեն [illegible]
Փոխտնօրեն [illegible]
Դասղեկ [illegible]
Ուսուցիչներ 1. [illegible]
2. [illegible]
3. [illegible]

Տրված է 25 հունիսի 1996թ.
Բնակավայր գ. Երևան

Կ. Տ. Ա 031058

Duplicate

**American University *of* Armenia**
**College of Humanities**
**and Social Sciences**

Հայաստանի ամերիկյան համալսարանի
Հումանիտար և հասարակական
գիտությունների ֆակուլտետ

The Trustees of the American University of Armenia on the recommendation of the College of Humanities and Social Sciences and in conformity with the laws of the Republic of Armenia and the State of California in the United States, confer upon

Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոսակազմի երաշխավորությամբ և Հայաստանի Հանրապետության ու ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի օրենքների համաձայն՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգաբարձուների խորհուրդը շնորհում է

Anahit Abrahamyan
the Degree of Master of Arts in Human Rights and Social Justice

Անահիտ Աբրահամյանին
Մարդու իրավունքների և սոցիալական արդարության մագիստրոսի աստիճան

with all the rights and privileges thereto pertaining.
Given at Yerevan, Republic of Armenia,
this 25th day of January in the year 2024.

և դրանից բխող բոլոր իրավունքներն ու արտոնությունները:
Շնորհված 2024 թվականի հունվարի 25-ին Երևանում,
Հայաստանի Հանրապետություն:

Կրկնօրինակ

Dean of the College

President of the University

Chairman of the Board of Trustees

RA Minister of Education, Science, Culture and Sport

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԿԱՅԱԳԻՐ թիվ 2009-[illegible]

## ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

Մասնակցել է փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդների 2009թ. որակավորման քննություններին և հանձնել այն:
վկայագիրն իրավունք է վերապահում ստանալ փաստաբանական գործունեության իրականացնելու արտոնագիր:

Հանձնաժողովի նախագահ

Արմեն Ղազարյան

29.09.2009թ.

# ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի 2002 թվականի փետրվարի 26-ի նիստի արձանագրությունից

<u>ԼՍԵՑԻՆ</u> – ա/ Անահիտ Վլադիմիրի Աբրահամյանին պետաիրավական հետազոտությունների բաժնում հայցորդ ձևակերպելու մասին հարցը:

բ/ Թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարը հաստատելու մասին հարցը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ</u> – Հ.Ա.Գևորգյանը, Վ.Վ. Ստեփանյանը, Գ.Ա. Պողոսյանը:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> – ա/ Անահիտ Վլադիմիրի Աբրահամյանին ձևակերպել հայցորդ պետաիրավական հետազոտությունների բաժնում “Քրեական դատավարություն” մասնագիտության գծով:

բ/ Թեկնածուական ատենախոսության թեման հաստատել “Գործի արդարացի քննությունը”

գ/ Գիտական ղեկավար հաստատել իր.գիտ.թեկ. Մ.Գ.Խաչատրյանին:

Գիտական խորհրդի նախագահ Գ.Ա.Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ
НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA
INTERNATIONAL SCIENTIFIC- EDUCATIONAL CENTER

375019, Երևան, Մարշալ Բաղրամյան, 24դ
Հեռ. 56-80-68, 56-80-32
e-mail: karbeg@sci.am

375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24д
Тел. 56-80-68, 56-80-32
e-mail: karbeg@sci.am
375019, Yerevan, Marshal Baghramian ave., 24d
Tel.: 56-80-68, 56-80-32
e-mail: karbeg@sci.am

# Տ ե ղ ե կ ա ն ք

Անահիտ Աբրահամյանը

հանձնել է հետևյալ որակավորման քննությունները (ստուգարքը)

| Առարկան (մասնագիտությունը, թվանիշը) | Գնահատականը, հանձնման ամսաթիվը | Քննական հանձնաժողովի նախագահի և անդամների անուն, ազգանունը, գիտական աստիճանը |
|---|---|---|
| Անգլերեն լեզու | Գերազանց 28.06.02 | Նախ.՝ Վ.Պողոսյան - փ.գ.դ<br>Անդ.՝ Գ.Բաղդասարյան, Ա.Հարությունյան ավ.դասախոսներ |
| Փիլիսոփայություն | Գերազանց 12.11.02 | Նախ.՝ Ա. Մանասյան. փ. բ. դ.<br>Անդ.՝ Ս. Վարդազարյան, Է. Կյուրեղյան- - փ. գ. թեկնածուներ |
| Ինֆորմատիկա | Ստուգված 22.06.04 | Նախ.՝ Յու.Շուքուրյան – տ.գ.դ.<br>Անդ.՝Վ.Սահակյան, Մ.Հարությունյան - ֆ.մ.գ.թեկնածուներ |

Տնօրեն Ա.Սարգսյան

Սույն տեղեկանքը տրված է հիմնարկում պահպանվող քննական արձանագրությունների հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

N Աս-11 27.11.2006թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք 176/2006

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*/անուն, ազգանուն/*

հանձնել է որակավորման քննությունները /ստուգարքները/ հետևյալ մասնագիտությամբ.

ԺԲ. 00.04 Դատավարական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն,փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն

*/թվանիշը, մասնագիտությունը/*

| N | Առարկան | գնահատականը, հանձնման ամսաթիվը | Քննական հանձնաժողովի նախագահի և անդամների անուն-ազգանունները, գիտական աստիճանը, կոչումը |
|---|---|---|---|
| 1. | Դատավարական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն | «լավ» 24.11.2006թ. | Նախագահ – Ղազինյան Գ. – իր.գ.դ.: Անդամներ – Պետրոսյան Ռ. – իր.գ.դ., Դիլբանդյան Ս. – իր.գ.թ., Գաբուզյան Ա. – իր.գ.թ., Առաքելյան Ս. – իր.գ.թ.: |

Կ.Տ. ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ս. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ Ն. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 193/30 Ա «01» 10 2024թ.

## «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՀԱՅՑՈՐԴ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Աբրահամյանի դիմումը կից փաստաթղթերով, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի համաձայնությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 25-ի թիվ 238-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի» 57-60-րդ, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետերով.

**հրամայում եմ**

1. Անահիտ Վլադիկի Աբրահամյանին ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում ձևակերպել հայցորդ:
2. Հայցորդության ժամկետ սահմանել 2024թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2029թ. հոկտեմբերի 1-ը:
3. Հայցորդի հետ սահմանված կարգով կնքել հայցորդության համակարգում ուսումնառության պայմանների վերաբերյալ պայմանագիր:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ դոկտորական կրթության կենտրոնին, հաշվապահական հաշվառման վարչությանը, իրավագիտության ֆակուլտետի դեկանին և Ա. Աբրահամյանին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, ք.Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ. 596-046, քարտուղարություն հեռ. 596-680


№8/31 «26» 03 2025թ.

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Տրվում է** *Անահիտ Վլադիկի Աբրահամյանին,*

**որ նա աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝**

*01.10.1996-23.08.2001թթ.- սովորել և ավարտել է ՀՀ ՆԳՆ բարձրագույն դպրոցի իրավագիտության ֆակուլտետը,*

*23.08.2001-23.01.2003թթ.-ՀՀ ՆԳՆ իրավական ապահովման վարչության կազմվերլուծական և ՆԳՆ ուսումնական հաստատությունների հետ կապի բաժնի տեսուչ,*

*23.01.2003-10.09.2008թթ.-ՀՀ ոստիկանության իրավական ապահովման վարչության վարչաիրավական բաժանմունքի տեսուչ,*

*10.09.2008-22.07.2011թթ.-ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական պաշտպանության բաժնի տեսուչ,*

*22.07.2011-23.02.2012թթ.-ՀՀ ոստիկանության շտաբի կազմակերպական-վերլուծական վարչության բարեփոխումների և զարգացման ծրագրերի համակարգման բաժնի տեսուչ,*

*23.02.2012-12.08.2016թթ.-ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական փորձաքննությունների բաժնի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ,*

*12.08.2016-09.08.2019թթ.-ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական պաշտպանության բաժնի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ:*

*Վերջին՝ «Ոստիկանության փոխգնդապետ» կոչումը շնորհվել է 21.07.2014 թվականին:*

*Ծառայության ընթացքում խրախուսվել է 9 անգամ, այդ թվում՝*

*շնորհակալության հայտարարում – 3 անգամ,*

*վաղաժամկետ կոչման շնորհում – 1 անգամ,*

*պարգևատրում «Օրենքի պատվար» մեդալով,*

*«Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով,*

*«Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 2-րդ աստիճանի մեդալով,*

*«Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 3-րդ աստիճանի մեդալով,*

*«Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով:*

Ազատվել է ՀՀ ոստիկանությունում ծառայությունից՝ ՀՀ ոստիկանության պետի

« 09 » 08 2019թ. թիվ 2200-Ա հրամանով:

Տեղեկանքը տրվում է ներկայացնել *Ըստ պահանջման վայրի:*

Կ. Տ.

Բաժնի պետ Ա.Ադամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, ք. Երևան,, Նալբանդյան 130, հեռ. (+374) 010 59-65-91

N6/ 1353 «27» 03 2025թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Անահիտ Վլադիմիրի Աբրահամյանին, առ այն, որ նա 23.08.2001թ. - 22.07.2011թ. և 23.02.2012թ. - 09.08.2019թ. ծառայել է ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչությունում (նախկին անվանումը՝ Իրավական ապահովման վարչություն) և իրականացրել հիմնականում հետևյալ գործառութային պարտականությունները.

Քաղվածք ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետի 2015 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավաբանական վարչության ծառայողների գործառութային պարտականությունները հաստատելու մասին» 12-Ա հրամանից՝

**5. Իրավական փորձաքննությունների բաժնի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչը՝**

1) ապահովում է վարչության պետի, վարչության պետի՝ իրավական փորձաքննությունների ոլորտը սպասարկող տեղակալի, բաժնի պետի, նրա տեղակալի կողմից իրենց լիազորությունների հիման վրա տրված անհատական գրավոր և բանավոր ցուցումների և հանձնարարականների օպերատիվ, պատշաճ, օրինական կատարումը,

2) պահպանում է ոստիկանության կարգապահական կանոնները,

3) անձնական պատասխանատվություն է կրում իրեն տրված օրինական ցուցումների հանձնարարությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

4) անմիջականորեն հաշվետու է բաժնի պետի տեղակալին,

5) իրացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ոստիկանության ծառայողների իրավունքները և պարտականությունները,

6) նախապատրաստում է ոստիկանության իրավասեղծ աշխատանքների ծրագրերի նախագծեր, ապահովում հսկողությունը դրանց պատշաճ կատարման նկատմամբ,
7) ոստիկանության շտաբի ստորաբաժանումների կարծիքների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում կառավարության գործունեության միջոցառումների տարեկան ծրագրում և գերակա խնդիրներում ընդգրկելու նպատակով ամփոփում և ներկայացնում է առաջարկություններ,
8) վարչության ղեկավարության հանձնարարությամբ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ նախապատրաստում է իրավական ակտերի նախագծեր, համակարգում այդ նպատակով ստեղծված խմբերի աշխատանքները,
9) իրականացնում է ոստիկանության գործունեությունը կանոնակարգող՝ քաղաքականություն որոշող իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննությունը,
10) դրական իրավական փորձագիտական եզրակացությունների հիման վրա շրջանառության մեջ է դնում ոստիկանության իրավասեղծ նախաձեռնությամբ մշակված՝ քաղաքականություն որոշող իրավական ակտերի նախագծերը,
11) ապահովում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հեղինակային ուղեկցումը Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում, անհրաժեշտության դեպքում մասնակցում է դրանց քննարկմանը,
12) «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովում է ոստիկանության պետի նորմատիվ հրամանների պետական գրանցման գործընթացը,
13) ոստիկանության շտաբի ստորաբաժանումների առաջարկությունների ու առարկությունների հիման վրա կազմակերպում է այլ պետական մարմիններից և կազմակերպություններից ոստիկանության համաձայնեցմանն ուղարկված իրավական ակտերի նախագծերի ու այլ փաստաթղթերի քննարկումը
14) վարչության ղեկավարության հանձնարարությամբ ներկայացնում է ոստիկանությունը պետական կառավարման այլ մարմիններում, Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպություններում, հասարակական միավորումներում.
15) ոստիկանության շտաբի ստորաբաժանումների, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների հետ համատեղ մասնակցում է ոստիկանության գործունեությանն առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախապատրաստման աշխատանքներին.
16) ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և Հայաստանի Հանրապետության կառավարության մշտական գործող նախարարական կոմիտեների նիստերի օրակարգերը, նախապատրաստում անհրաժեշտ նյութերը, ոստիկանության կողմից ներկայացվելիք հարցերի փաթեթները և նախապատրաստում համապատասխան տեղեկանքներ և զեկույցներ,
17) վարչության ղեկավարության հանձնարարությամբ կատարում է իրավական ակտերի ոչ պաշտոնական մեկնաբանություններ, իսկ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ոստիկանության պետի ստորագրմանը ներկայացնելու նպատակով նախապատրաստում է պաշտոնական պարզաբանումներ,

18) իրավական ակտերի պարզաբանումներ, իրավաբանական խորհրդատվություն տրամադրում ոստիկանության շահագրգիռ ծառայություններին,

19) նախապատրաստում է իրավական բնույթի տեղեկանքներ:

**11. Իրավական պաշտպանության բաժնի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչը՝**

1) պատասխանատվություն է կրում իրեն վերապահված լիազորությունների պատշաճ ապահովման համար.

2) անմիջականորեն կատարում է վարչության պետի տեղակալի և բաժնի պետի և տեղակալի անհատական հանձնարարականներն ու ցուցումները

3) համապատասխան հանձնարարության դեպքում վարչությունը ներկայացնում է պետական մարմիններում և կազմակերպություններում:

4) իրականացնում է ոստիկանության շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության դատարաններում.

5) իրականացնում է վարչական բողոքարկման վարույթ

6) իրավական փորձաքննության է ենթարկում վարչական վարույթի նյութերը,

7) իրականացնում է ՀՀ ոստիկանությանը հասցեագրված դիմումների քննարկումը,

8) համակարգում է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի, դրա տարածքային բաժինների և մարզային վարչությունների իրավախորհրդատուների կողմից կատարվող աշխատանքը,

9) իրականացնում է ոստիկանությանը հասցեագրված վճիռների և որոշումների հաշվառումը, վերահսկում դրանց կատարումը.

10) իրականացնում է ոստիկանության գույքային շահերի պաշտպանվածության վիճակի վերլուծությունը դատական ակտերի ուսումնասիրման հիման վրա.

11) իրականացնում է ոստիկանությանը վերաբերող դատական պրակտիկայի ամփոփումը, ներկայացնում առաջարկություններ ոստիկանության օրինական շահերի դատական պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

12) գրավոր պարզաբանում է տալիս ՀՀ ոստիկանությունից պահանջվող տեղեկատվության տրամադրման թույլատրելիության վերաբերյալ

13) եզրակացություն է տալիս ՀՀ ոստիկանության կողմից ստորագրվելիք քաղաքացիաիրավական պայմանագրերի նախագծերի իրավական փորձաքննության վերաբերյալ,

14) ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի, դրան ենթակա ստորաբաժանումների, տարածքային մարմինների պետերի կողմից ներկայացված գրավոր հարցումների հիման վրա տրամադրում է իրավական խորհրդատվություն

15) իրավախորհրդատուների կողմից կատարված աշխատանքների և ոստիկանության ստորաբաժանումների կողմից վարչական ակտերի կատարման ընթացքի վերաբերյալ համակարգում և ներկայացնում է հաշվետվություններ,

16) իրականացնում է ոստիկանության նորմատիվ իրավական ակտերով սախատեսված այլ լիազորություններ.

17) անմիջականորեն հաշվետու է բաժնի պետի տեղակալին:

*Պետ* *Ռ. Մարանդյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

№ 105/գ-2025
«27» 03 2025թ.

www.aoj.am
info@justiceacademy.am
+374(60)460087

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ Անահիտ Վլադիկի Աբրահամյանը 2021 թվականի հուլիսի 08-ից մինչև 2022 թվականի ապրիլի 11-ը աշխատել է «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ որպես գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ:

Տրվում է ներկայացնելու ՀՀ Ազգային ժողով:

ՌԵԿՏՈՐ ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

*0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771*


*№ ԴԴ-1* Ն-2326

«27» **մարտի 2025թ.**

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է այն մասին, որ Անահիտ Վլադիկի Աբրահամյանը (նույնականացման քարտ՝ ) 2022 թվականի ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 23-ը զբաղեցրել է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության պետի պաշտոնը՝ պայմանագրային հիմունքներով:

Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

**Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594004*
*էլ.փոստ՝ info@moj.am*

№ Ե-28
«26» մարտի 2025թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է Անահիտ Վլադիկի Աբրահամյանին (նույնականացման քարտ՝ կողմից, հանրային ծառայությունների համարանիշ՝ ) այն մասին, որ նա.

2022 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 7-ը զբաղեցրել է Արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողի պաշտոնը,

2022 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև 2024 թվականի մայիսի 14-ը զբաղեցրել է Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնը,

2024 թվականի մայիսի 14-ից առ այսօր զբաղեցնում է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը:

Տրվում է ներկայացնելու պահանջվող վայր:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

*0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ. (00374 10) 511-771, www.court.am*


№ ԴԴ-1 Հ-2367

«28» մարտի 2025թ.

**ԱՆԱՀԻՏ ՎԼԱԴԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ**

**Հարգելի տիկին Աբրահամյան.**

Ի պատասխան Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում 26.03.2025թ. մուտքագրված Ձեր առցանց դիմումի՝ տեղեկացվում է, որ Անահիտ Վլադիկի Աբրահամյանը (ծնված՝ 27.02.1979թ., նույնականացման քարտի համար՝ ) դատական կարգով սնանկ չի ճանաչվել:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից Անահիտ Վլադիկի Աբրահամյանին անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ինչպես նաև անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դատական ակտեր չեն կայացվել:

Հարկ է նշել, որ համապատասխան ուսումնասիրությունն իրականացվել է «Դատական համակարգ» տեղեկատվական համակարգչային ծրագրի միջոցով (սկսած՝ 2008 թվականից):

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ**


Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչություն
Կատ.՝ Ս. Բալասանյան
Հեռ. (010) 51-18-32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱԼԱԹԻԱՅԻ ԲԱԺԻՆ

ք. Երևան Ա.Սարգսյան 22 Հեռախոս 77.02.02 Ֆաքս 39.02.02

Թիվ 36 2043

« 25 » 03 2025 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայտնվում է, որ Անահիտ Վլադիկի Աբրահամյանը /ծնվ. 27.02.1979թ./ , ըստ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի ենթարկվել քրեական պատասխանատվության ՀՀ դատական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով, դատվածություն չունի և հետախուզման մեջ չի գտնվում:

Տրվում է ներկայացնելու ՀՀ ԱԺ:

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ Կ. Թունիկյան

կատ. Տ. Բաբայան

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անահիտ Վլադիկի Աբրահամյանը
/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ

/

վերջին չորս տարում հանդիսանում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և վերջին չորս տարում մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում:

**ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի պետ**
**Վաղինակ Նիկողոսյան**

Recoverable Signature

X

ՎԱՂԻՆԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Signed by: NIKOGHOSYAN VAGHINAK 1105860361

Կ. Տ.

«26» 03 2025թ.

N 42/94/6/78632-25

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն 15 նոյեմբերի 2019թ.

1. **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ** (գտնվելու վայրի/փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 48 վարչական շենքե, գրանցման վկայական. թիվ 0176, գրանցման համարը. 40, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին. 10.12.1991թ.), այսուհետ՝ «**Պատվիրատու**», ի դեմս վարչության նախագահ Արտավազդ Սարգսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, ում անունից համաձայն 27.11.2018թ. տրված թիվ 8159-02 լիազորագրի հանդես է գալիս Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ Արմինե Սաhակյանը, մի կողմից, և

**2. Անահիտ Վլադիկի Աբրահամյանը** (Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր՝ / տրվել է , կողմից, սոցիալական քարտի համար՝ հաշվառման/բնակության հասցեն. ), այսուհետ՝ «**Կատարող**», մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր և ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## Բաժին 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար սույն պայմանագրով նախատեսված կարգով, ժամկետում և չափով:

1.2 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել ներքոհիշյալ ծառայությունները (հետայսու՝ Ծառայություններ).

ա) ՀՀ ԿԲ կողմից Բանկային նշագրմամբ ստացված հարցումների պատասխանների նախագծերին և կից փաստաթղթերի պատրաստում;

բ) Բանկի կառուցվածքային ինքնուրույն և տարածքային ստորաբաժանումներին FATCA պահանջների հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում;

գ) Հաճախորդների սպասարկման և այլ աշխատակիցներին FATCA պահանջների վերաբերյալ պարզաբանումների ներկայացում;

դ) FATCA կառավարչական ակտով սահմանված պատասխանատու աշխատակցի գործառույթների և դրույթների արդյունավետության մոնիթորինգի իրականացում:

ե) FATCA կառավարչական ակտով սահմանված հաշվետվությունների պատրաստում և ներկայացնում ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայություն:

զ) Ներքին դիտարկումների բաժնի պետի այլ հանձնարարությունների կատարում:

1.3 Ծառայությունները համարվում են պատշաճ մատուցված Կողմերի կողմից այդ մասին համապատասխան հանձնման-ընդունման ակտը կնքելու պահից: Եթե Պատվիրատուի կողմից ակտն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այն ստորագրված (կնքված) վիճակում Կատարողին հասանելիք օրինակը հետ չի վերադարձվում կամ ակտը չհաստատելու վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացվում, ապա Ծառայությունները համարվում են պատշաճ մատուցված:

1.4 Ծառայությունները փաստացի մատուցվում են սույն պայմանագրի կնքման ամսաթվից սկսած Պատվիրատուի գտնվելու վայրում՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, 46 շենք» հասցեում, Պատվիրատուի համար սահմանված աշխատանքային օրերին և ժամերին:

1.5 Ծառայությունները մատուցելու համար Պատվիրատուն՝

ա) Կատարողի համար ստեղծում է Ծառայությունների մատուցման պայմաններ (տարածքի և համապատասխան գույքի տրամադրում).

բ) Կատարողին տրամադրում է իրեն պատկանող **armbusinessbank.am** դոմեյնում համակարգի մուտքի օգտանուն.

գ)Կատարողին տրամադրում է ինտերնետ հասանելիություն.

դ) ապահովում է աշխատանքային օրերին և ժամերին Կատարողի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.4 կետում նշված հասցեի տարածք.

ե) ապահովում է Բանկի գործառնական ծրագրերին հասանելիություն:

1.6 Ծառայությունների որակն ստուգելու և Ծառայություններն ընդունելու Պատվիրատուի լիազորված անձ է համարվում Պատվիրատուի Ռիսկերի կառավարման դեպարտամենտի տնօրենը կամ նրան փոխարինող անձը:

## Բաժին 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 **Կատարողը պարտավոր է՝**

2.1.1 Ծառայությունները մատուցելիս գործել Պատվիրատուի ներքին իրավական ակտերով նախատեսված պայմաններին համապատասխան.

2.1.2 ապահովել Ծառայությունների մատուցման կապակցությամբ իրեն հայտնի դարձած բանկային, առևտրային և այլ գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը սույն պայմանագրի կատարման ընթացքում և դրա գործողության դադարեցումից հետո.

2.1.3 Ծառայությունները մատուցել Պատվիրատուի ցուցումներին համապատասխան, ինչպես նաև ներկայացրած ելակետային տվյալները, փաստաթղթերը և այլ բանավոր կամ գրավոր տեղեկատվությունները.

2.1.4 Ծառայությունները մատուցել անձամբ՝ առանց երրորդ անձին հանձնարարելու.

2.1.5 Պատվիրատուի ղեկավարներին ժամանակին հայտնել Ծառայությունների պատշաճ կատարմանը խոչընդոտող բոլոր հանգամանքների մասին.

2.1.6 խստորեն պահպանել Ծառայությունների մատուցման հետ կապված գործառնությունների կատարման ու պահպանման վերաբերյալ Պատվիրատուի սահմանած կանոնները.

2.1.7 երրորդ անձանց չբացահայտել կամ չտարածել Պատվիրատուին մատուցած Ծառայությունները.

2.1.8 Պատվիրատուին հատուցել Ծառայությունների ոչ պատշաճ մատուցմամբ առաջացած վնասները լրիվ ծավալով և ամբողջությամբ.

2.1.9 Ծառայություններն ամբողջական և լրիվ մատուցելուց հետո Պատվիրատուի ստորագրմանը (կնքմանը) ներկայացնել Ծառայությունների հանձնման-ընդունման համապատասխան ակտ՝ իր կողմից ստորագրված վիճակում, երկու օրինակից.

2.1.10 հատուցել Պատվիրատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է՝

ա) Պատվիրատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով.

բ) Պատվիրատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից.

գ) իրեն հանձնված գույքը ոչ պատշաճ պահպանության հետեւանքով:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 սույն պայմանագրով նախատեսված չափերով և ժամկետում Կատարողին վճարել Ծառայությունների համար.

2.2.2 Կատարողին տեղեկացնել և հասանելի դարձնել իր մոտ գործող Ծառայություններին առնչվող ներքին իրավական ակտերին և դրանցում կատարված փոփոխությունների ու լրացումների մասին.

2.2.3 Կատարողի համար ստեղծել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ.

2.2.4 Կատարողի կողմից Ծառայությունների մատուցումը հաստատող հանձնման-ընդունման ակտն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաստատել՝ ստորագրելով (կնքելով) հանձնման-ընդունման ակտը կամ գրավոր առարկություններով այն հետ վերադարձնել Կատարողին:

2.3 **Կատարողն իրավունք ունի** սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով պահանջել վճարելու Ծառայությունների համար:

2.4 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.4.1 Ծառայությունների մատուցման հետ կապված Կատարողի համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալու.

2.4.2 Կատարողից պահանջել Ծառայությունների պատշաճ մատուցում.

2.4.3 առարկություններ ներկայացնել մատուցված Ծառայությունների որակի վերաբերյալ:

## Բաժին 3. Ծառայությունների վարձատրության չափը, վճարման կարգն ու ժամկետները

3.1 Ծառայությունների վարձատրության չափը ամսական կազմում է 150000.00 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը և այլ վճարները:

3.2 Ծառայությունների ամսական վարձատրությունը Կատարողին վճարվում է կանխիկ եղանակով Պատվիրատուի դրամարկղից կամ անկանխիկ եղանակով՝ փոխանցվում է Կատարողի նշած բանկային վավերապայմաններով:

3.3 Ծառայությունների ամսական վարձատրությունը վճարվում է մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## Բաժին 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ ձևով կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության համաձայն:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցությունը շարունակվում է 15 օրից ավելի, ապա Կողմերը պարտավոր են միմյանց միջև համաձայնեցնել (պայմանավորվել) հետագա գործողությունների մասին:

Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարող կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս կողմին կապի, ներառյալ ինտերնետի միջոցով գրավոր տեղյակ պահել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության և պարտավորությունները չկատարելու մասին: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության մասին ողջամիտ ժամկետում չտեղեկացնելը նման պարտավորություն կրող կողմին զրկում է վկայակոչել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայությունը որպես պատասխանատվությունից ազատելու հիմք:

## Բաժին 5. Կոնֆիդենցիալ և գաղտնի տեղեկատվության չհրապարակում

5.1 Կողմերը պարտավորվում են խիստ գաղտնի պահել ոչ հրապարակային, կոնֆիդենցիալ, գաղտնի դասակարգված, որը կրում է համապատասխան նշում կամ գրառում (էլեկտրոնային կամ գրավոր տեսքով՝ կախված կոնկրետ դեպքից), առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները, իր պարտավորությունները կատարելու շնորհիվ մյուս կողմից ստացած տեղեկատվությունը՝ նոր լուծումների և տեխնիկական գիտելիքների մասին՝ ներառյալ օրենքով չպաշտպանվող տեղեկությունը, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն, որը Կողմերին հասանելի է դարձել սույն Պայմանագրի կատարման ընթացքում (հետայսու՝ Գաղտնի տեղեկատվություն):

5.2 Կողմերն իրավունք չունեն հրապարակել Գաղտնի տեղեկատվությունն որևէ երրորդ անձի, բացառությամբ Պատվիրատուի աշխատակիցների, կապալառուների կամ խորհրդատուների, որոնց Գաղտնի տեղեկատվությունն անհրաժեշտ է աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար:

5.3 Այն դեպքում, երբ Կողմերը չեն ցանկանա շարունակել հետագա համագործակցությունը կամ էլ եթե որևէ պատճառից ելնելով հետագա համագործակցությունը դառնում է աննպատակահարմար, Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Գաղտնի տեղեկատվությունը երրորդ անձանց փոխանցելու կամ Պատվիրատուի աշխատակիցների կողմից դրա անթույլատրելի օգտագործումը կանխելու համար:

5.4 Անկախ վերը նշված դրույթների՝ տեղեկատվությունը չի համարվի Գաղտնի հետևյալ դեպքերում.

ա. տեղեկատվությունը հանդիսացել է կամ դարձել է մատչելի լայն հասարակությանը այլ աղբյուրներից, որոնք կապ չունեն Կողմերի կողմից սույն Պայմանագրի խախտմամբ տեղեկության հրապարակման հետ, պայմանով, որ Գաղտնի տեղեկատվությունը չի դիտարկվի որպես լայն հասարակությանը հասանելի տեղեկատվություն՝ ելնելով սոսկ միայն նրանից, որ այն հայտնի է կոմերցիոն շահագրգռվածություն ունեցող որոշ անձանց.

բ. տեղեկատվությունը դարձել է հասանելի ստացող Կողմին մի աղբյուրից, որը (այսինքն տվյալ աղբյուրը) այնքանով որքանով որ հայտնի է ստացող Կողմին, գաղտնիության պահպանման կամ տեղեկության չօգտագործման պարտավորություններ չունի, և որը գրավոր հավաստվում է ստացող Կողմի կողմից,

գ. կամ ստացվել է պատշաճ Կողմի գրավոր թույլտվությունը այդ տեղեկության հրապարակման համար:

5.5 Անկախ սույն Պայմանագրի դրույթներից՝ ստացող Կողմը պատասխանատվություն չի կրում Գաղտնի տեղեկատվության հրապարակման համար, և գաղտնիության պահպանման պարտավորվածությունները չեն տարածվում այն Գաղտնի տեղեկատվության նկատմամբ, որը ենթակա է հրապարակման գործող օրենսդրության համաձայն:

5.6 Եթե որևէ Կողմից պահանջվի որևէ Գաղտնի տեղեկատվության հրապարակում՝ կապված որևէ դատական կամ վարչական վարույթի կամ քննության հետ, այդ Կողմը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին այդ պահանջի, այդ պահանջի պայմանների ու պահանջի հետ կապված հանգամանքների մասին:

5.7 Տեղեկատվությունը հրապարակող Կողմի գրավոր պահանջով ստացող Կողմը պարտավոր է.

(i) դադարեցնել Գաղտնի տեղեկատվության օգտագործումը,

(ii) վերադարձնել Գաղտնի տեղեկատվությունը և նրա բոլոր պատճենները, գրառումները և գաղտնի տեղեկությունից արված քաղվածքները հրապարակող Կողմին՝ յոթ (7) օրվա ընթացքում վերը նշված պահանջը ստանալուց հետո, և

(iii) տեղեկատվությունը հրապարակող Կողմի պահանջով գրավոր հավաստել, որ ստացող Կողմը կատարել է սույն կետում նշված բոլոր պարտավորությունները:

5.8 Կողմերը համաձայնում են, որ սույն Պայմանագրի ցանկացած խախտում որևէ Կողմի կողմից կարող է պատճառել վնասներ, և այդ Կողմը պատասխանատվություն է կրում Պայմանագրի այդ խախտման համար համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5.9 Սույն պայմանագիրը տարածվում է շահագրգիռ Կողմի բոլոր իրավահաջորդների վրա:

5.10 Սույն Պայմանագրի լուծման և/կամ դադարման դեպքերում սույն Պայմանագրի Գաղտնի տեղեկատվության մասով դրույթները պահպանում են իրենց ուժը և գործում են հինգ տարի՝ սկսած սույն Պայմանագրի լուծման և/կամ դադարման օրվանից, եթե Գաղտնի տեղեկատվությունը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով այլ ժամկետներ սահմանված չեն:

5.11 Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է օգտագործել Գաղտնի տեղեկատվությունը միայն այն ծավալով, որն անհրաժեշտ է սույն Պայմանագիրը կատարելու համար կամ էլ ուղղակիորեն թույլատրված է սույն Պայմանագրով:

## Բաժին 6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 18-ից և գործում է մինչև 2020 թվականի մայիսի 18-ը:

6.2 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: Կողմերի ցանկացած միակողմանի գրություն և դրան տրված պատասխան կամ լռություն չի կարող որակվել որպես սույն Պայմանագրի փոփոխություն կամ լրացում:

6.3 Կողմերն իրավունք ունեն միակողմանիորեն հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ մյուս կողմին գրավոր ծանուցում ներկայացնելով:

Սույն պայմանագրից միակողմանիորեն հրաժարվելը Կողմերին չի ազատում մինչ այդ ստանձնած պարտավորությունների կատարումից:

